

**ԴԻՄՈՒՄ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ**

**Բունդեսթագում լոբբիստական ո՛չ մի աշխատանք բռնապետությունների համար (մամուլի հաղորդագրություն):**

«Վտանգված ժողովուրդների ընկերություն»-ը (ՎԺԸ, գերմ.՝ “Gesellschaft für bedrohte Völker”) մի գրությամբ դիմել է Գերմանիայի Բունդեսթագի նախագահին: Դրանում իրավապաշտպան կազմակերպությունը դր. Վոլֆգանգ Շոյբլեից պահանջում է այսուհետև կանխել բռնապետությունների համար լոբբիստական յուրաքանչյուր աշխատանք Գերմանիայի Բունդեսթագում: «Շարունակ կան լրատվական հաղորդումներ որոշ պատգամավորների՝ Ադրբեջանի անարդար վարչակարգի համար լոբբիստական աշխատանքի մասին: Միայն վեց ամիս առաջ Ադրբեջանի բանակը, Թուրքիայի՝ իսլամիստական կնիքով կառավարության օժանդակությամբ, ներխուժեց Լեռնային Ղարաբաղ», - հիշեցնում է ՎԺԸ-ի՝ Մերձավոր Արևելքի փորձագետ դր. Քամալ Սիդոն: «Թուրքիան գործի դրեց նաև Հյուսիսային Սիրիայի իսլամիստ վարձկաններին: Չի կարող պատահել, որ Բունդեսթագի պատգամավորներն արդարացնեն գործողության այդ եղանակը»:

Նա նշում է, որ Թուրքիայի կողմից սիրիա-քրդական անկլավ Աֆրինի զավթման օրինակով՝ Ադրբեջանի ռազմական ուժերը և նրանց իսլամիստ վարձկանները գրավեցին տարածքի գրեթե երկու երրորդը, որը մի ժամանակ գտնվում էր Հայաստանի վերահսկողության տակ: Ինչպես Աֆրինում, Ադրբեջանի ռազմական ուժերը և նրանց իսլամիստ վարձկանները հարձակվում էին քրիստոնյա հայ բնակչության վրա: Արդյունքը գնդակահարություններն ու զանգվածային աքսորումներն էին:

Այդ հարձակումից դեռ առաջ՝ Ադրբեջանի տիրակալ Ալիևի վարչակարգը քննադատվում էր մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների պատճառով: «Այդ քննադատությունը մեղմացնելու և նավթ ու գազ Եվրոպա հանգիստ արտահանել կարողանալու համար տարիներ շարունակ երկիրը մեծ գումարներ է ներդրել նաև Գերմանիայում», - հաղորդում է Սիդոն: Սյապես, դրամական միջոցներ են թափվել սպորտային ակումբների, Օպենհայմի նախկին քաղաքապետի, Բունդեսթագի Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԳՄԴԿ, գերմ.՝ Sozialdemokratische Partei Deutschlands) պատգամավոր Մարկուս Հելդի, Ֆրանկֆուրտի Քրիստոնեա-դեմոկրատական միության (ՔԴՄ, գերմ.՝ Christlich Demokratische Union) և Քրիստոնեական-սոցիալական միության (ՔՄՄ, գերմ.՝ Cristlich-Soziale Union) քաղաքական գործիչ Էդուարդ Լինտների համար: Բունդեսթագի պատգամավոր Կարին Շթրենցը (ՔԴՄ)՝ «Հարավային Կովկաս» խորհրդարանական խմբի նախագահը, որը վերջերս է մահացել, վարչակարգի համար իր աշխատանքի պատճառով արդեն սկսած 2017 թ. ուներ ցմահ մուտքի արգելք դեպի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽՄՎ):

«Գերմանական քաղաքականության զսպվածությունը Բաքվի և Անկարայի ավտորիտար վարչակարգերի հարձակողական պատերազմների և անխնա առաջխաղացման հանդեպ շատերը հիասթափեցնող են համարում», - հայտարարում է Սիդոն: «Ոչ մի դեպքում չի կարելի ստեղծել տպավորություն, թե այդ զսպվածությունը գնվել էր Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորներին կամ գերմանացի այլ քաղաքական գործիչներին նվիրատվությունների միջոցով»:

Կոնտակտ՝ դր. Քամալ Սիդո, Մերձավոր Արևելքի հարցերով բանախոս

Էլ-փոստ՝ k.sido@gfbv.de, presse@gfbv.de